

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ԽՈՍՎԱԾՔԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ

ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Վայոց ձորի խոսվածքն ընդգրկում է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի ավելի քան մեկ տասնյակ տեղաբնիկ (ոչ Խոյ-Սալմաստից վերաբնակված) գյուղեր՝ Արենի, Աղավնաձոր, Գնիչիկ, Գնգեվազ, Խաչիկ, Կեչուտ, Ռինգ, Չիվա, Արփի, Հորս, Վերին Ազնաբերդ: Խոսվածքը մասամբ գոյատևում է նաև Վայոց ձորի եղեգիս (Ալայազ), Զեդեա (Զեյթա) և Արարատի եղեգնավան (Շիգլու) և Հանջանիստ գյուղերում: Մինչև 1988 թ. այս խոսվածքով էին խոսում նաև Հյուսիսային Նախիջևանի այժմ արդեն հայաթափ երկու բնակավայրեր՝ Նախիջևան գավառի Ազնաբերդ (Ըզնաբերդ) և Ճահուկ-Շահապուռնիք գավառի Օծուի (Բաղամլու) գյուղերը:

Մինչև 1980-ական թվականները Վայոց ձորի խոսվածքի մասին սոսկ թուուցիկ հիշատակություններ կային բարբառագիտական գրականության մեջ¹, այն համարվում էր Արարատյան բարբառի խոսվածք: Մեր հեղինակած մի քանի աշխատանքներով² պարզել ենք, որ Վայոց ձորի խոսվածքը դուրս Արարատյան բարբառի խոսվածք չէ, այլ իր հատկանիշներով էպես տարբերվում է ինչպես Արարատյան, այնպես էլ Արցախի և Վասպուրականի հարակից խոսվածքներից՝ գրանց հետ ունենալով նաև մոտավորապես հավասար շփման եզրեր: Այս փաստը, անշուշտ, հաստատում է խոսվածքի տեղաբնիկ լինելը՝ այսինքն սլատմականորեն Այրարատ, Վասպուրական և Արցախ-Սյունիք աշխարհների միջև ընկած տարածքում տեղադրված լինելը:

Խոսվածքում մասնավորապես՝

բառասկզբում ձայնեղ պայթականներն ու կիսաչփականները խլանում են, իսկ բառամիջում և բառավերջում՝ խուլերը ձայնեղանում (պաղ, տանագ, ծաքար, ճանջ, կաղու, արգաթ, պառց, կաքիղ, կանգաղ):

մասնակիորեն գործում է Աճառյանի օրենքը (տալար, պանջար, տախ, ծալիգ):

բացառական հոլովը անվանական համակարգում կազմվում է էն վերջավորությամբ (սարէն, ծօրէն, ըրէխէքօնցէն), դերանվանական համակարգում՝ անէ վերջավորությամբ (ինձանէ, քէզանէ, ընդանէ):

պահպանվել է հին հայերենի օ հոլովիչը (մըղանի-մըղանօ, քամի-քամօ, քէնի-քէնօ):

¹ Ա. Ղարիբյան. Հայ բարբառագիտություն. Երևան, 1947, էջ 73: Ա. Գրիգորյան. Հայ բարբառագիտության գասրնթաց. Երևան, 1957, էջ 205:

² Ա. Վարդանյան. Վայոց ձորի խոսվածքի հնչյունաբանությունը. «Բասբեր Երևանի համալսարանի», №1, 1983, էջ 71-83: Ա. Վարդանյան. Վայոց ձորի խոսվածքի ձևաբանական առանձնահատկությունները (դրույթներ).- Երիտասարդ լեզվաբանների Հանրապետական հինգերորդ գիտաժողովի նյութեր, Երևան, 1986, էջ 107-108:

ապառնի դերբայը կազմվում է օ վերջավորութամբ (քընալօ, լըսիլօ, պընցանալօ)։

բայի ժխտական ձևերը կազմվում են օժանգակ բայի հետագաս կիրառությամբ (լըսըմ չէմ, լսիլօ չէմ, լըսըմ չիմ, բիդի լսիմ վօչ, լըսիլ մի՛ և այլն)։

բայի անցյալի ձևերի առաջին դեմքում առկա է մ վերջավորությունը (լըսըմ իմ, լըսել իմ, լըսիմ, կըլըսիմ, բիդի լըսիմ, լըսիլ դիմ)։

Հետաքրքրական է նաև այն փաստը, որ Վայոց ձորի միջնադարյան վիճակագիր արձանագրություններում³ և ձեռագրերի հիշատակարաններում⁴ սլահայանվել են խոսվածքի «հետքերը»։ Այս փաստը նույնսլես հաստատում է խոսվածքի տեղաբնիկ լինելը։

Մտնկական խոսքի, մանկական բառապաշարի ուսումնասիրությունը չեզվարանություն, մասնավորապես հոգելեզվաբանություն յուրահատուկ բնագավառներից է։ Լեզվաբանական գրականություն մեջ թեև կան հայերենի մանկական խոսքի ուսումնասիրությունը նվիրված առանձին աշխատանքներ,⁵ այնուամենայնիվ, թե՛ գասական բարբառագիտական աշխատանքներում և թե՛ ժամանակակից հեղինակների ուսումնասիրություններում բարբառների մանկական բառապաշարը, ցավոք, հատուկ քննություն առարկա գրեթե չի գարձել։ Սակայն համոզված ենք, որ նման ուսումնասիրությունները կարող են վեր հանել բարբառային և բնագհանրապես լեզվական հետաքրքիր իրողություններ։

Վայոց ձորի խոսվածքի բառապաշարում մինչև մեր օրերը գոյատևել են մի ամբողջ շարք մանկական բառեր՝

ախ(ա)-ծեծել, խփել, աչ-անուշ, հաճելի, աչի-աչք, աջա-ականջ, բարուկոշիկ, մաշիկ, բըժի-կոփ, բըժօ-հորթ, բըլի-միջատ, բըլօ-փոքր միջատ, բուլջուր, դըդի-այծ, դըդօ-ուլ, դընգօյ-խաղ, խաղալ, գընգըլ-խաղալիք, թաչկա, թաթի, չաչի-ձեռք, թիթի-քիթ, լուլու-մեզ, միգել (տղաների), կագամիրգ, անուշեղեն, կուդու-երեխա, տիկնիկ, կօգօլ-հրեշ, դագան, ծածա-ծամոն, ծածի-ձվածեղ, ծածաբ-կանգնել, ծուծու-ձուլ, ծիծի-ձի, ծիծի-կուրծք, կուրծք տալ, կուլի-գլուխ, դիլի-ատամ, ճիժի-լույս, լուսավոր իր կամ կետ, ճընգըլ-երաժշտություն, նվագարան, նվագել, ճուճու-հավ, թոչուն, ճուլու-երեխայի սեռական անգամ, մամա-մայր, ուտել, մաչ-համբույր, պաչ, նամ նամ-ուտել, նանա-քնել, շաշուլ-լավ, դեղեցիկ, սիրել, շիշի-գիրկ, մեջք, շալակ, գրկել, շալակել, չիշի-մեզ, միգել (աղջիկների), չուչու-չոր, չօչօ-քուռակ, չօչօչ-ավանակ, պաբա-հայր, պապ, սլաբար-պար, պարել, տադա-տատ, տընգըլ-պար, պարել տիդի-նստել, տուդու(դ)-երեխայի հետույք, տուտու-ոչխար, գառ, աօգօ-ոտք, քայլել, ուֆ-ցավ, ցավել, հիվանդություն, հիվանդանալ, փափա-հաց, փըլի-կատու, փըլօ-կատվի ձագ, փուլգզվելի, տգեղ, քաքա-կղկղանք, կղկղել, քըխ-վատ, տհաճ, անհամ, քուչիչուն, քըչօ-չան լակոտ, ֆուֆու-ճաշ և այլն։

³ Ղ. Ա լ ի շ ա ն. Սիսական. Վենետիկ, Ս. Ղազար, 1893, էջ 145, 167:
⁴ Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության. Հ. Ա, Երևան, 1973, էջ 39-40:
⁵ Ա. Գ ա լ ս տ յ ա ն. Մանկական խոսքի բառապաշարի մի քանի առանձնահատուկություններ – Պրոֆեսոր Տ. Ավետիսյանի ծննդյան 60-ամյակին նվիրված դիտական նյութերի ժողովածու. Վանաձոր-Երևան, 2001, էջ 15-20: Ժ. Կ ո ն դ ա կ չ յ ա ն. Մեկից յոթ տարեկան երեխաների բառապաշարը. Երևան, 1981:

Սրանք լեզվի զարգացման վաղ շրջաններից գարերով, հազարամյակներով եկած այն բառերն են, որոնք արտահայտում են միևնույն կայուն նշանակությունները, և որոնց հիմքի վրա կրտսեր տարիքի (մեկից երեք տարեկան) բարբառախոս երեխան փորձում է հասկանալ մեծերին, մտքեր արտահայտել և զարգացնել սեփական բառապաշարը՝ վեց տարեկանում հասցնելով շուրջ 2500 բառի:⁶

Ինչպես բերված բառացանկից նկատվում է, ըստ ձևաբանական դասակարգման, խոսվածքի մանկական բառապաշարում առկա են հիմնականում գոյականներ, ավելի քիչ թիվ են կազմում ածականները և բայերը: Մյուս խոսքի մասերը կրտսեր տարիքի մանկական խոսքում գրեթե բացակայում են: Սակայն, քանի որ երեխայի խոսքի մեջ ձևաբանական, ինչպես նաև շարահյուսական հստակ սահմանադատումներ չկան, միևնույն բառը կարող է կիրառվել ոչ միայն որպես գոյական կամ ածական, այլև որպես բայ:

Օրինակ, «տաղա ուֆ» արտահայտությունը կարող է նշանակել «տատիկը հիվանդ է», «լիջի ուֆ» արտահայտությունը՝ «ատամս ցավում է», «կուղու տողո» արտահայտությունը կարող է նշանակել և՛ «տիկնիկի ոտքը», և՛ «երեխան քայլում է»:

Խոսվածքի մանկական բառապաշարն ըստ կազմավորման կարելի է բաժանել հետևյալ բառախմբերի՝

ա) ձայնարկություններից առաջացած բառեր՝ ախ, ախա (ախ-զայրույթ արտահայտող ձայնարկություն), աչ (աչ-բավականություն արտահայտող ձայնարկություն), ուֆ (ուֆ-ցավ արտահայտող ձայնարկություն), փու (փուֆ-զգվանք արտահայտող ձայնարկություն), բրժո (բրժո-բրժո-հորթին կանչելու ձայնարկություն), զըղո (զրգո-զրգո-ուլին կանչելու ձայնարկություն), փըչո (փըչո-փըչո-կատվի ձագին կանչելու ձայնարկություն) քըչո (քըչո-քըչո-շան լակոտին կանչելու ձայնարկություն), ճուճու (ճուճ-ճուճ-հավի ճտերին կանչելու ձայնարկություն), չօչօ, չօչօչ (չօչչ-չիին քչելու ձայնարկություն) և այլն.

բ) բնաձայնություններից առաջացած բառեր՝ զընգըլ (զրնգոցի ձայնի նմանակումը), ճընդըլ (ճընգոցի ձայնի նմանակումը), ղիջի (ատամների կրճտոցի նմանակումը), նամ նամ (ծամելու ձայնի նմանակումը), ֆուֆու (ճաշը փչելու ձայնի նմանակումը), չիչի (միզելու ձայնի նմանակումը), քըխ (կոկորզը մաքրելու ձայնի նմանակումը) և այլն.

գ) խոսվածքի գավառական բառերի կրճատված-պարզեցված տարբերակներ՝ աջա (անգաջ-ականջ), թաթի (թաթիգ-թաթիկ), ծածա (ծանգաք-ծամոն), ծածի (ծըվածէղ-ծվածեղ), ծիծի (ծի-ծի), ծիծի (ծիծիգ-ծիծիկ), բըլի (բըլօջ||բըղօջ-բգեգ), ճուջու (ճուջուղ-երեխայի սեռական անգամ) և այլն.

դ) առանձին ուսումնասիրության արժանի, ըստ երևույթին, հայերենի բառապաշարի ավելի հին շերտերի բառեր՝ կուջի, կոզօզ, փափա, շաշուլ, չիչի, չաչի, տիդի և այլն:

Օրինակ, վերջին խմբին դասվող փափա բառը ակադեմիկոս Գ. Զահուկյանը բխեցնում է հնդեվրոպական *papp(p)a արմատական բառից,⁷ կար-

⁶ Ժ. Կոնդակչյան, նշվ. աշխ., էջ 6-9:

⁷ Գ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան. Երևան, 1987, էջ 275:

ծում ենք, որ մաման («ուտել» նշանակությամբ) ակնհայտորեն համեմատելի է հնդեվրոպական *mam(m)a արմատական բառի հետ, թիթին, լինրևս, համեմատելի է լսեթերեն titita («քիթ») բառի հետ, բարուլը՝ պարսկերեն بیابوش («մաշիկ») բառի, մաչը՝ ماچ («համբույր, պաչ») բառի, չուչուն՝ ուուսերեն ШУШУН («կանացի երկար զգեստ») բառի, կուգուն՝ ուուսերեն кукла («սիկնիկ») բառի, բուն՝ պարսկերեն آب («ջուր») և շումերերեն ab («ջուր») բառերի հետ:

Ինչպես նկատվում է, բարբառների մանկական բառապաշարն իր մեջ ամփոփում է լեզվական հետաքրքիր իրողություններ և միանգամայն առանձին ուսումնասիրության արժանի բնագավառ է:

ДЕТСКАЯ ЛЕКСИКА ВАЙОЦДЗОРСКОГО ГОВОРА

АРТАК ВАРДАНЯН

Резюме

Говор Вайоц Дзора охватывает более десятка сел с автохтонным населением Вайоцдзорской области Республики Армения (Арени, Ахавнадзор, Гнишик, Гндеваз, Хачик, Кечут, Ринд, Чика, Арпи, Горс, Верин Азнаберд). До 1988 г. этот говор существовал также в двух населенных пунктах северного Нахичевана (Азнаберд, Оцоп), в которых сейчас уже нет армянского населения. По морфологической классификации, в детской лексике говора преобладают в основном существительные, гораздо меньше прилагательных и глаголов. Другие части речи в детской речи младшего возраста почти отсутствуют.